ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ

(1885-1920)

Եվ նորից կզգանք, որ մեր սրտին դու մո՞տ ես,
Մորմոքող հրի՛ պես մեր հիվանդ արյան,
Որ լռաե երգին քո մեր հոգին կարոտ է,
Օ՜, հեռու ընկեր իմ, օ՜, Վահան Տերյան...

Եղիշե Չարենց

ԶՎԱՐՃԱԼԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Բանաստեղծի ավագ եղբայրը՝ հետագայում արձակագիր Ղազարոս Ջավախեցին, հիշում է, որ ձմռան մի երեկո վառարանի մոտ «թմբլիկ փիսիկի պես» մեն-մենակ մոխրի հետ խաղացող ու եղունգներն անընդհատ կրծոտող Վանիկին իրենց սրամիտ մայրը «ալրոտ ջախճպան» (ջրաղացպան) է անվանում: Տնեցիներն սկսում են ծիծաղել և այդ մականունով կանչել նրան: Երեխան վիրավորվում ու լաց է լինում: Հայրը, որ այդ պահին զբաղված էր ընթերցանությամբ, իր մոտ է կանչում որդուն և նրան մխիթարելու համար զվարճալի հեքիաթ է պատմում ինչ-որ *Բոռռ կապվի* մասին: Շարունակ ծիծաղաշարժ իրավիճակներում հայտնվող կատուն երկար ժամանակ չի կարողանում մուկ որսալ. ամեն անգամ մկնիկը խույս է տալիս: Իսկ հայրն այդ պահին երեխաներին հարցնում էր՝ ռում պես, և հետևում էր

պատասխանը՝ Ներսեսի, Արամի, Ղազարի... Հերթը Վանիկինն էր: Կատվի բախտն ի վերջո բերում է, ու նա մի «խեղճ մկնիկ է բռնում և անուշ անում»: Դյուրազգաց և տպավորվող փոքրիկի աչքերից արցունքներ են թափվում, և նա սկսում է հեծկլտալ.

«– Ինչ եղավ, բալա՛ս, ինչի՞ կուլաս, լավ հեքիաթ չէ՞ր:

– Չէ՛, լավ չէր... ինչի՞ կերավ մկնիկիս, բա մեղք չէ՞ր...,– լացակումած կմկմում է Վանիկը:

– Հիմա՛ր, դրա համար ես լալի՞ս... Բա ես քեզ չե՞մ ասել, որ բոլոր հեքիաթները սուտ են: Հեքիաթների մեջ ինչքա՜ն դևերի ու սատանաների անուն ես լսել, բա իսկի մեկին տեսե՞լ ես...

– Չէ՛:

– Դե՛, տեսար, որ էդ բոլորը սուտ են, ճիշտ որ լիներ, կտեսնեիր: Բոռոն էլ մկնիկին խոմ իրականում չկերավ, հեքիաթի մեջ կերավ:

Վանիկն արդեն բավարարված էր ու աչքերը սրբելով՝ սկսում է ծիծաղել, ապա և սպառնալ.

– Ես որ տեսնեմ Բոռո կատվին տաշտի մեջ, պիտի զարնեմ (հարվածեմ), որ մկներին չխաբի...»:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

Առերևույթ ինքն իր նկատմամբ անփույթ և անուշադիր Վահանը, այնուամենայնիվ, օժտված էր չափազանց զգայուն խառնվածքով՝ ընդունակ անգամ ծայրահեղ բռնկումների: Այս տեսակետից ուշագրավ է ընտանիքի մյուս որդու՝ Արամի մի դիտարկումը. «Վահանն իր մանկությունն անցկացրեց նախանձելի պայմաններում: Ծնողներիս գուրգուրանքը, շրջապատի սերը, նյութական լիությունն ու առատությունը. այս բոլորը Վահանի մանկությանը բաժին ընկան: Ընտանեկան այդ խաղաղ մթնոլորտը թեև կոկում էր նրա բնավորությունը, բայց չէր կարողանում վերացնել այն անհարթությունները, որ բնածին էին: Սովորաբար մեղմ ու խաղաղ, հեզ, անխոս, հպատակվող ու լսող, ծիծաղկոտ այս մանուկը ստեպ (հաճախ) դուրս էր գալիս այդ նորմալ դրությունից և անճանաչելի դառնում. կարծեք ինչ-որ կապված հանգույց պայթում էր նրա մեջ, և այնուհետև նա դառնում էր անզսպելի, անդիմադրելի ու անմատչելի համոզումների ու խրատների: Հետո մեղմանում, մոռանում էր պոռթկումի պատճառը և դառնում նախկին հեզ, հլու և ժպտուն մանուկը:

ԻՄ ԽԱՂԱՂ ԵՐԵԿՈՆ

Իմ խաղաղ երեկոն է հիմա
Մեղմալույս և՛ տխուր, և՛ անուշ.
Քեզ երբեք սիրտըս չի մոռանա,
Իմ մաքո՛ւր, առաջին իմ անուրջ...

Տարիներ, տարիներ կըսահեն,
Կըմեռնեն երազները բոլոր –
Քո պատկերը անեղծ կըպահեմ
Օրերում անհաստատ ու մոլոր:

Եվ տանջանք, և՛ բեկում, և՛ թախիծ.
Սև օրեր ես դեռ շա՛տ կըտեսնեմ.
Անունըդ թող փարոս լինի ինձ
Սուտ կյանքի և դառը մահու դեմ...

ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Ո՞ր ժողովածուում է զետեղված բանաստեղծությունը, և ի՞նչ թեմայով է գրված այն:
2. Օրվա ո՞ր պահն է ընտրել հեղինակը իր հույզերն արտահայտելու համար. ինչո՞ւ:
3. Բանաստեղծը ինչո՞ւ է վստահ, որ սև օրեր դեռ շատ կտեսնի:
4. Բանաստեղծի համար ի՞նչն է գեղեցիկի իդեալը, որ կյանքի մթին ուղիների փարոս կդառնա:
5. Որտեղի՞ց է գալիս այս թախծի տրամադրությունը: Ինչո՞ւ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ինչպե՞ս է հեղինակը բնութագրում իր սիրած աղջկան:
2. Կարդա՛ «Իմ խաղաղ երեկոն է հիմա» բանաստեղծությունը և քո վերաբերմո՛ւնքն արտահայտիր՝ պատասխանելով քառաբաժանի հարցերին:

1. Բնութագրող Բնութագրի՛ր բանաստեղծության լիրիկական հերոսին:	2. Զգացմունքներ արտահայտող Ի՞նչ զգացումներ ունեցար բանաստեղծությունը կարդալուց հետո:
3. Կենսափորձ Բանաստեղծության բովանդակությունը ի՞նչ հիշեցրեց քեզ: Ի՞նչ համանման պատմություն ես ընթերցել կամ կինոնկար դիտել: Նոր վերնագի՛ր դիր յուրաքանչյուր տանը՝ բովանդակությունից ելնելով:	4. Իմաստավորում

3. Գտի՛ր օրինաչափություններ «Տխրություն» բանաստեղծության հետ, նշի՛ր նմանությունները տարբերություններն ու ընդհանրությունները:



4. Մեկնաբանի՛ր բանաստեղծի վերհուշը տարիների հեռավորությունից՝ ներկայացնելով նրա ապրումները.

Տարիներ, տարիներ կըսահեն,
Կըմեռնեն երազները բոլոր —
Քո պատկերը անեղծ կըպահեմ
Օրերում անհաստատ ու մոլոր:

5. Գնահատի՛ր բանաստեղծի հույզերը և համեմատի՛ր քո ստացածի հետ:
6. Ցո՛ւյց տուր պատկերավորման միջոցները և նրանց նշանակությունը բանաստեղծական պատկեր ստեղծելու գործում::

Հայ պոեզիայում ուրիշ ոչ մի հեղինակի ստեղծագործություն այդքան ներծծված չէ թախիծով, տխրությամբ, մենության պատկերներով, որքան Վահան Տերյանի բանաստեղծությունները: Հաճախ, սակայն, ասում են, թե տերյանական թախիծը լուսավոր է, խաղաղ: Այս բնորոշումն էլ, իհարկե, մի փոքր բանաստեղծական է, քանի որ հարատև թախիծն ու տխրությունը մարդուն կարող են մղել ինքնամփոփության, հուսահատության: Քաղաքական ֆոնի վրա Տերյանն իր հոգեվիճակն է արտահայտել, իր տառապանքը որպես մարդ, քաղաքացի:

«Իմ խաղաղ երեկոն է հիմա» բանաստեղծությունը դրա վկայությունն է: Հեղինակը մի կողմից երեկոն բնորոշում է որպես խաղաղ, անուշ, մյուս կողմից՝ տխուր: Ինչպե՞ս կարող է երեկոն և՛ տխուր լինել, և՛ անուշ: Բանն այն է, որ քնարական հերոսն իր սիրելիին է հիշել, կարոտում է նրան: Այդ հուշը տխրեցնում է նրան, հասկանալի դարձնում մենության պատճառը, բայցևայնպես նրա սիրտը լցնում է հավատարմության զգացումով, կյանքի վայրիվերումների ժամանակ թևաթափ չլինելու, իր այդ առաջին անմեղ սիրո վերհուշով ուժ ստանալու վստահությամբ. «Եվ տանջանք, և՛ բեկում, և՛ թախիծ. // Սև օրեր ես դեռ շատ կըտեսնեմ. // Անունըդ թող փարոս լինի ինձ // Սուտ կյանքի և դառը մահու դեմ...»:

Մի՞թե վերջին պոետն եմ ես

Մի՞թե վերջին պոետն եմ ես,
Վերջին երգիչն իմ երկրի.
Մա՞հն է արդյոք, թե նի՞նջը քեզ
Պատել, պայծա՛ռ Նաիրի:
Վտարանդի, երկրում աղոտ,
Լուսե՛ղ, քեզ եմ երազում,
Եվ հնչում է, որպես աղոթք,
Արքայական քո լեզուն:
Հնչում է միշտ խոր ու պայծառ,
Եվ խոցում է և՛ այրում.
Արդյոք բոցե վարդե՞րդ են վառ.
Թե՞ վերքերն իմ հրահրուն:
Ահով ահա կանչում եմ քեզ,
Ցոլա՛, ցնո՛րք Նաիրի.–
Մի՞թե վերջին պոետն եմ ես,
Վերջին երգիչն իմ երկրի ...

ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Ե՞րբ է գրվել «Մի՞թե վերջին պոետն եմ ես» բանաստեղծությունը, և ի՞նչ հոգեկան խռովք ու տագնապ է հնչեցնում բանաստեղծը:
2. Ի՞նչ թեմայով է գրված բանաստեղծությունը:
3. Ո՞րն է բանաստեղծության գաղափարական բովանդակությունը:
4. Հեռուներում թախծող բանաստեղծը ինչո՞ւ է տագնապում հայրենիքի ճակատագրի ու նրա վաղվա օրվա համար:
5. Պայծառ Նաիրիի ո՞ր բնորոշ գծերն է երգում հեղինակը: Ինչո՞ւ:
6. Ի՞նչ է սպասվում անհունորեն սիրելի Նաիրի երկրին:

ԱՌԱՁԱԴՐԱՆՔՆԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տերյանը ինչո՞ւ է ողբացել հազարամյակների խորքից եկած, մոլորված, հուսահատ ու վիրավոր իր ժողովրդի անսփոփ վիշտը: Ասածդ հիմնավորի՛ր հեղինակային տողերով:
2. «Մի՞թե վերջին պոետն եմ ես» հռետորական հարցը ինչո՞ւ է տագնապ հարուցում բանաստեղծի հոգում: Ինչո՞ւ է երկիր Նաիրին տրորվում օտարների կրնկի տակ: Ջուգահեռներ անցկացրո՛ւ մեր օրերի հետ:
3. Մեկնաբանի՛ր հետևյալ քառատողը և ներկայացրո՛ւ դիրքորոշումդ:

Վտարանդի, երկրում աղոտ,
Լուսեղ, քեզ եմ երազում,
Եվ հնչում է, որպես աղոթք,
Արքայական քո լեզուն:

4. Ինչո՞ւ է «Մա՞հն է արդյոք, թե նի՞նջը քեզ//Պատել, պայծա՛ռ Նաիրի» հարցն ուղղակի իմաստով հնչում, և դրամատիկ մենախոսություն–երկխոսությունն այլևս ողբախառն աղոթք է դառնում:
5. Բանաստեղծության հետևյալ տողերը ինչո՞ւ են հնչում որպես տագ–նապի ահազանգ. մեկնաբանի՛ր ու կարծիքդ արտահայտի՛ր դրա վերաբերյալ.

Ահով ահա կանչում եմ քեզ՝
Ցոլա՛, ցնո՛րք Նաիրի, –
Մի՞թե վերջին պոետն եմ ես,
Վերջին երգիչն իմ երկրի ...

6. Ո՞ւմ է դիմում բանաստեղծը: Ինչո՞ւ:
7. Ինչո՞ւ է ահով լցվել բանաստեղծության քնարական հերոսի հոգին: Ասածդ հիմնավորի՛ր:
8. Արժևորի՛ր բանաստեղծության արտահայտած հույզը և համեմատի՛ր քո զգացածի հետ:

– Գրականության (հատկապես պոեզիայի) մեջ կարևոր են նաև տարբեր զգացմունքային շեշտերը, որոնք ուժեղացնում են բովանդակության հուզականությունը: Խոսքին այդպիսի երանգ են տալիս, այսպես կոչված, հռետորական (ճարտասանական) դարձվածքները՝ հարց, բացականչություն, դիմում և այլն:

Հռետորական հարցը չպետք է շփոթել սովորական հարցական նախադասության հետ: Այստեղ հարցը տրվում է ոչ թե պատասխան ստանալու, այլ խոսքի հուզական լարվածությունը բարձրացնելու նպատակով: Հաճախ դա այնպիսի հարց է, որն իր մեջ պարունակում է նաև որոշակի պատասխան:

Հռետորական հարցի բնույթը, սակայն, շատ բազմազան է: Այն երբեմն ենթադրում է պատասխան, որն անմիջապես հետևում է հարցին: Երբեմն էլ երկի գաղափարն ինքնին արտահայտվում է իբրև որոշակի հարց, որի պատասխանը հեղինակը չգիտի, բայց ուզում է այն սրել, ընդգծել և այդ պատճառով էլ արտահայտում է հարցումով: Այս դեպքում իմաստը բուն հարցադրման մեջ է: Այսպիսի հարցադրումներ են Վահան Տերյանի «Մի՞թե վերջին պոետն եմ ես» բանաստեղծության մեջ:

Այս գրվածքն արտահայտում է բանաստեղծ – հայորդու, բանաստեղծ – քաղաքացու ցավն ու տագնապը մայր հայրենիքի վտանգված ապագայի նկատմամբ: Հարազատ օրրանից հեռու, վտարանդի՝ նա կարոտում է իր մայրենին: Բանաստեղծը հեռվից հավանաբար վատ լուրեր է լսել և թերևս չի կարողանում իր որդիական ծառայությունը բերել իր ժողովրդին և ահա գրում է այս փոքրիկ բանաստեղծությունը՝ հռետորական հարց հնչեցնելով. «Մի՞թե վերջին պոետն եմ ես//Վերջին երգիչն իմ երկրի»: Նա, իհարկե, չի ուզում, որ այդպես լինի: Նրա սիրտն աղաղակում է. «Ահով ահա կանչում եմ քեզ//Ցոլա, ցնո՛ր Նաիրի...»: